

հաճի Իսմայէլը կ'աճապարէ ծովու ճամբով Կ. Պոլիս երթալ որ կարենայ բարեխօսել Զուղայեցիի մասին որպէսզի զըրկուած թուրք պաշտօնեան ետ կանչուի: Յաւալի է որ ուշադիր չեմ եղեր դիտնալու համար թէ նամակս թուական ունէ՞ր թէ ոչ:

Այս նամակին զընդլծիւնը անտարակոյս Յակոբ Զուղայեցիինն է: Նամակին գլուխը կաթողիկոսական սովորական կնիքը չկայ այլ իր անձնական կնիքը, հաւթածեւ, երկու փակաղբերով, որոնցմէ առաջինը կը կարգամ ՅԱԿՈԲ Իսկ երկրորդը ԿԱԹՈՂԻԿՈՍ:


Դիտել տանք որ Հաջի Իսմայէլի մասին ոչ մէկ յիշատակութիւն կը գտնենք իբր թէ Առաքել վարդապետի ի Հոռոմ Յակոբ Զուղայեցիի գրած նամակին մէջ: Վերջապէս այդ նամակին համաձայն Յակոբ Զուղայեցի 700 թուման արժողութեամբ նուէրներ պատրաստած էր իբր թէ Պապին տանելու համար: 700 թուման այդ օրերուն համար այնքան հսկայական գումար մըն էր որուն մասին յիշեն անգամ ծիծաղելի պիտի ըլլայ քննութեան մը մէջ: Եթէ Զուղայեցիին իր կաթողիկոսութեան որեւիցէ մէկ տանը 700 թուման ունեցած ըլլար անտարակոյս էջմիածնայ պարտքերը կը վճարէր: Վերջին նամակն ալ կը յիշէ «անիծ-

եալ հաբառ Բարսեղը» տարակոյս չթողելով որ Զուղայեցիին կը պահէ իր հատարմութիւնը Հայաստանեայց եկեղեցիի դաւանանքին եւ աւանդութեանց հանդէպ եւ դեռ ոգի ի բոլին կը մարտնչի ոտնձգութեանց դէմ Հայկական եկեղեցւոյն սահմաններէն ներս եւ իր հաւատացեալներու հօտին մէջ:

ՅԱԿՈԲ ԶՈՒՂԱՅԵՑԻՒ ՎԵՐԱԳԸՐՈՒԱԾ ՎԵՐՁԻՆ ԴԱՒԱՆԱԳԻՐԸ

Հին ու նոր կարգ մը պատմիչներ կը խօսին դաւանադրութեան մը մասին որ իբր թէ Յակոբ Կաթողիկոս Զուղայեցի իր մահուան միջոցին ստորագրած է: Դաւանագիրը հոս առաջին անգամ ըլլալով մեր մատենադրութեան մէջ լուսատիպ կը ներկայացնեմ, նոյն տառն տալով անոր արտագրութիւնը եւ դայն ենթարկելով քննութեան:

Դաւանագիրը կը պահուի Հոռոմի Հաւատոյ Տարածման Ժողովոյն զիւանին մէջ, հատոր 5 իբր էջ 598 ա.: Հոս կը ներկայացնեմ սղագրութիւնները «Ըստ անշուշտ եւ անհրաժեշտ եւ ամենաճշմարիտ աւանդութեան» տ(եառ)ն մեռոյ Յ(իսուս)ի Ք(րիստոս)ի, եւ ըստ քարոզութեան» ականատես բանին կենաց մատակարարողաց սրբազան Առաքելոցն: Եւ ըստ ուսուց-



ՅԱԿՈԲ Դ. ԶՈՒՂԱՅԵՑԻ Կաթողիկոսի վերագրուած ՎԵՐՁԻՆ դաւանագիրը: Դիւան Հաւատոյ Տարածման Ժողովի ի Հոռովմ: